# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

25.01.2012թ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Խաչաղբյուր համայնքի ավագանու առաջին նիստի 1,2,3 որոշումները:

Խաչաղբյուր համայնքի ղեկավար Ռ. Գաբոյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 92800088

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՈՒՆՎԱԾ Է
15. 03 2012թ.
Մուտք թիվ 1324-12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. Խաչաղբյուր

## ՆԻՍՏ N 1

15.01.2012 թ. Գ. Խաչաղբյուր

Խաչաղբյուր գյուղական համայնքի ավագանու անդրանիկ նիստը:
Նիստին մասնակցում էին ավագանու 7 անդամներից 5-ը:
Նիստի օրակարգը բաղկացած է 3 հարցից:

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքի 2012թ.-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Հ. Գաբոյան:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի, ենթակառուցվացքների 2012թ.-ի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին:

   Զեկուցող՝ Հ. Գաբոյան:

3. ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքի 2012թ-ի տարեկան բյուջեի հաստատման մասին:

   Զեկուցող՝ Հ. Գաբոյան:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:
Կողմ՝ 5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա:

Ավագանու անդամներ՝
Գ. Հարությունյան
Մ. Խաչատրյան
Լ. Գաբոյան
Ա. Գաբոյան
Վ. Մարտիրոսյան

Համայնքի ղեկավար՝ Հ. Գաբոյան

Քարտուղար՝ Ն. Զաքարյան

# Հայաստանի հանրապետության Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղական համայնքի ավագանի

Գ. Խաչաղբյուր.
15.01.2015.թ.

Որոշում 1

ՀՀ. Գեղարքունիքի մարզի խաչաղբյուր համայնքի 2012թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, և « Տեղական տուրքերի և վճարների» մասին ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Խաչաղբյուրի գյուղական համայնքի ավագանին

Որոշեց՝

Խաչաղբյուր գյուղական համայնքի տարածքում 2012թ. հունվարի 1-ից սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.՝

Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների, շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր), շինարարության (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլատվության համար, տեղական տուրքը սահմանվում է:
ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ ընդհանուր մակերես ունեցող հասրակական և արտադրական նշանակության օբյեկտների համար մինչև 0 – 15.000 դրամ, սահմանել՝ 5000դրամ:
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար բա)201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 30.000 դրամ սահմանել 10.000դրամ
բբ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50.000 դրամ սահմանել՝ 15.000:
բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50.000 դրամ. սահմանել՝ 25.000 դրամ.
ոչ հիմնական շինությունների համար՝
գ)մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 8.000 դրամ
դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ

Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, վերականգնելու օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլատվության համար տեղական տուրք սահմանվում է 0-15.000 դրամ, սահմանել 300դրամ.

1) ոգելից խմիչքի վաճառքի քույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 0-ից 17500դրամ, սահմանել՝ 1000 դրամ:
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 1500-ից 17500 դրամ, սահմանել՝ 3000 դամ:

Համայնքի տարծքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝
ա) Գյուղատնտեսական մթերքների համար յուրաքանչյուր օրվա համար 3000 դրամ:

բ) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000-200.0000 դրամ, սահմանել՝150.000 դրամ:
Համայնքի տարածքում խաղատները,հանրային սննդի օբյեկտները,բաղնիքները(սաունարաններ), զվարճանքի օբյեկտները ժամ-24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) Առևտրի օբյեկտների համար 25000դր.-ից 50.000-դրամ, սահմանել՝ 25.000դրամ:
Բ) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50.000-ից 100.000դրամ, սահմանել՝50.000 դրամ:
Գ) Բաղնիքների համար, 200.000 - 500.000 դր. սահմանել՝ 200.000 դրամ:
Դ) Խաղատների համար 500.000 – 1000000դրամ, սահմանել՝ 500.000 դրամ:
Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար,տեղական տուրք ընթացիկ տարվա համար 0 – 1000 դրամ, սահմանվում է 1000 դրամ:
Ե) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար փոխհատուցման վճար սահմանել 100 դրամ:
Զ) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:
Է)Համայնքի բնակիչներին պատկանող յուրաքանչյուր մեկ խոշոր եղջերավոր անասունների համար սահմանել 500 դրամ, մանր եղջերավոր անասունների մեկ գլխի համար սահմանել՝200 դրամ:
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորոգրման պահից:
Ավագանու անդամները որոշումը հաստատեցի քվեարկությամբ:
Կողմ՝ 5, դեմ՝ չկա, ձեռնպահ չկա:

Ավագանու անդամներ՝
Գ. Հարությունյան
Մ. Խաչատրյան
Լ. Գաբոյան
Ա. Գաբոյան
Վ. Մարտիրոսյան

Համայնքի ղեկավար Հ. ԳԱԲՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. Խաչաղբյուր
15.01.2012 թ.

## ՈՐՈՇՈՒՄ N 2

ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի, ենթակառուցվածքների 2012թ.-ի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին:
Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 31-րդ հոդվածի դրույթներով ՝ Խաչաղբյուր համայնքի ավագանին

## ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի, ենթակառուցվածքների 2012թ-ի հաստիքացուցակը և դրույքաչափերը հետևյալ կտրվածքով՝

| | պաշտոնի անվանումը | հաստիքային միավոր | դրույքաչափ | 20% | ընդամենը | սոց. վճար | տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | համայնքի ղեկավար | 1,0 | 144,000դր. | 8000դր | 152,000դր | 21,600դր | 1,824,000դր |

աշխատակազմ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Աշխատակազմի քարտուղար՝ (ծ-1-2-1) | 1,0 | 77.000 | 8000 | 85.000 | 16750 | 1.020.000 |
| 2 | Գլխ մասնագտ՝ հաշվապահ (ծ-2-3-1) | 1,0 | 76.000 | 8000 | 84.000 | 16600 | 1.008.000 |
| 3 | i կարգ. մասնագետ .(ծ -3-1-1) | 1.0 | 58.000 | 8000 | 66.000 | 13900 | 792.000 |
| 4 | i կարգի մասնագետ (ծ-3-1-2) | 1.0 | 58.000 | 8000 | 66.000 | 13900 | 792.000 |
| 5 | ii-կարգի մասնագետ(ծ-3-2-1) | 1.0 | 53.000 | 8000 | 61.000 | 13150 | 732.000 |
| 6 | մշակույթի տան տնօրեն | 1.0 | 53.000 | 8000 | 61.000 | 13150 | 732.000 |
| 7 | գրադարանավար | 1.0 | 32.500 | 6500 | 39.000 | 9850 | 468.000 |
| 8 | անասնաբույժ | 1.0 | 40.000 | 8000 | 48.000 | 10000 | 576.000 |
| 9 | հավաքարար | 1.0 | 32.500 | 6500 | 39000 | 9850 | 468.000 |

Ավագանու անամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:
Կողմ՝ 5, դեմ չկա, ձեռնպահ՝ չկա:

Ավագանու անդամներ՝ Գ. Հարությունյան
Մ. Խաչատրյան
Լ. Գաբոյան
Ա. Գաբոյան
Վ. Մարտիրոսյան

Համայնքի ղեկավար՝ Հ. ԳԱԲՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Խաչաղբյուր
15.01.2012թ.

## ՈՐՈՇՈՒՄ N3

ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղական համայնքի 2012թ.-ի տարեկան բյուջեի հաստատման մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 2002թ.-ի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» 1997թ.-ի հունիսի 24-ի օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով՝

Խաչաղբյուր համայնքի ավագանին

## ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Խաչաղբյուր գյուղական համայնքի 2012թ.-ի բյուջեն:
ա) Եկամուտների մասով – 23.094.700դրամ:

I. Հարկային եկամուտներ՝

1. Գույքահարկ ------------------------------------------------------ 930.000դր.
2. Ն/թ ֆիզիկական անձեր ------------------------------------------ 890.000
3. Գույքահարկի ապառք ------------------------------------------ 40.000
4. Հողի հարկ ------------------------------------------ 3.437.200
5. Հողի հարկի անցած տարիների ապառք--------------------- 800.000
6. Տեղական տուրքեր և վճարներ --------------------------------- 180.000

ii Ոչ հարկային եկամուտներ

1. Հողի վարձավճար ------------------------------------------------ 935.000դր.
2. Հողի վարձավճարի ապառք ----------------------------------- 40.000.
3. Արոտների վարձավճար ------------------------------------------- 184.000
4. Արոտների վարձավճարի ապառք ----------------------------- 50.000
5. Համահարթեցման դոտացիա ---------------------------------- 15.938.500
6. Պատվիրված լիազորություններ --------------------------------- 600.000

Ծախսային մասը կազմված է.

1. Աշխատավարձ ----------------------------------- 8.500.000դր.
2. Պատվիրված լիազորություն ---------------- 480.000
3. Աշխատավարձի վրաեկ ----------------------- 1.800.000
4. Պատվիրված լիազորություն ---------------- 120.000
5. ընդանուր բնույթի այլ ծառայություն ------ 500.000
6. Օգնություն քաղաքացիներին --------------- 800.000
7. Համակարգչային ծառայություն ------------ 200.000
8. Գրասենյակային ապր. և նյութեր ----------- 600.000
9. Տնտեսական նյութեր ------------------------- 150.000
10. Գործուղում հանրապ. ներսում ------------ 350.000
11. Կապի ծառայություն -------------------------- 300.000
12. Մասնագիտական ծառայություն ---------- 200.000

13. Տեղեկատվական ծառայություն --------------- 100.000դր.
14. Ներդրումներ ----------------------------------- 100.000
15. Կապիտալ ներդրումներ ------------------------- 7.244.700
16. Էլեկտրաէներգիա --------------------------------- 250.000
17. Կենցաղային այլ նյութեր ------------------------ 100.0
18 . Պահուստային ֆոնդ ------------------------------ 1.300.0
Ընդհանուր ծախսային մասը կազմված է --------- 1.300.0դր

Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ.
Կողմ 5, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Ավագանու անդամներ՝
Գ. Հարությունյան
Մ. Խաչատրյան
Լ. Գաբոյան
Ա. Գաբոյան
Վ. Մարտիրոսյան

Համայնքի ղեկավար՝ Հ. Գաբոյան

կարվ. 6 էջ